<<ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ դյուրացված ՀՀ պարզեցված պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում: Այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն>>



Ի՞նչ է իրենից ներկայացնում քաղաքացու բյուջեն

Քաղաքացու բյուջեն նախատեսված է հանրային ֆինանսների կարևորագույն տեղեկատվությունը լսարանին(քաղաքացիներին) ներկայացնելու համար: Այն սովորաբար գրվում է մատչելի լեզվով և ներառում տեսողական տարրեր, որոնք օգնում են ոչ մասնագետ ընթերցողին հասկանալ ողջ տեղեկատվությունը: Չնայած քաղաքացու բյուջեն պետական բյուջեի պարզեցված տեսակն է, այն պետք է պարունակի պետական բյուջեի ամբողջական տարբերակում պարունակող ինֆորմացիան և հասկանալի լինի համապատասխան կրթություն չունեցող քաղաքացիների համար:

Ինչու՞մն է կայանում Քաղաքացու բյուջեի կարևորությունը

- Այն ապահովում է քաղաքացու հստակ պատկերացումը,թե ինչ ազդեցություն ունի բյուջեն իր կյանքի վրա,
- Այն պետք է պատկերացում տա քաղաքացուն,թե ինչպես են կառավարվում հանրային ֆինանսները,
- Այն արդյունավետ միջոց է , որպեսզի կառավարությունը ցույց տա, որ պատասխանատվություն է կրում հանրության առջև,
- Այն նաև կարող է ծառայել որպես քաղաքացիական կրթության գործիք: Այն կարող է հանդես գալ որպես մեխանիզմ՝ բացատրելու համար, թե ինչպես է բյուջեն ձևակերպվում, ընդունվում և ծախսվում, և ով է պատասխանատվություն կրում յուրաքանչյուր փուլում,

Ի՞նչ տեղեկատվություն պետք է ներառված լինի Քաղաքացու բյուջեյում

- ***Բյուջեի հիմքում ընկած տնտեսական կանխատեսումները.*** Տնտեսական աճի և գնաճի վերաբերյալ ակնկալիքները և կանխատեսումները, թե արդյոք բյուջեն կունենա ավելցուկ կամ դեֆիցիտ,
- ***Եկամուտների հավաքագրում***. Բացատրություն, թե որտեղից է գալիս կառավարությանը հատկացվող գումարը,
- ***Բյուջետային ծախսեր***. Բացատրություն, թե ինչպես և ինչու է ծախսվում գումարը,
- ***Քաղաքականության նախաձեռնություններ***. Եկամտի կամ ծախսերի զգալի աճի կամ նվազման բացատրություն:
- ***Կոնտակտային տվյալներ.*** Ու՞մ պետք է դիմել լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Եվ ամենակարևորը՝ ներառված ողջ տեղեկատվությունը պետք է լինի պարզ և հասկանալի ֆինանսական կրթություն չունեցող քաղաքացիների համար՝ զերծ ֆինանսական բարդ տեմինալոգիայից և ժառգոնային տերմիններից:



Քաղաքացու Բյուջեն ՀՀ-ում (խնդիրներ)

- Չափից ավել ծավալուն է (ավելի քան 30 էջ)
- Նման է բյուջեի համառոտ տարբերակի
- Ներառված է մասնագիտական տերմինալոգիա
- Չի կազմակերպվել համապատասխան քննարկումներ ՀԿ-ների և քաղաքացիների հետ

Միջազգային փորձ

- ԱՄՆ-մի քանի կարճ ուղեցույցներ
- ՄԹ-կարճ ուղեցույցներ բյուջեն հասկանալու համար
- Նոր Զելանդիա-կարճ ուղեցույց որտեղ հիմնականում ներառված են թվեր
- Հարավային Աֆրիկա-2 էջանոց փաստաթուղթ-եռամյա թիրախային ոլորտներով

Ուսումնասիրված բոլոր երկրներում շատ մեծ ուշադրություն է դարձվում Քաղաքացու բյուջեի քննարկումների ժամանակ ՀԿ-ների և քաղաքացիների մասնակցությունը:

ՔՀԿ-ների և քաղաքացիների մասնակցությունը

ՔՀԿ-ների և հանրության խորհրդատվությունը կարող է օգնել կառավարությանը ավելի լավ գնահատել Քաղաքացու բյուջեի նպատակը և լսարանը և նպաստել կառավարության և հասարակության միջև վստահության ամրապնդմանը:

Հանրային քննարկումները կարող են կազմակերպվել մի քանի կերպով՝ սկսած առցանց հարցումներից մինչև պետական պաշտոնյաների և ՔՀԿ-ների ղեկավարների հանդիպումները:

Հասկանալ, թե ինչ է ուզում հասարակությունը, ամենակարևոր քայլն է քաղաքացու բյուջեի ձևավորման գործում:



Միևնույն ժամանակ, իհարկե, կառավարությունը(ֆինանսների նախարարությունը) զգալիորեն ավելի շատ գիտելիքներ և փորձ ունի այն մասով,թե ինչ տեղեկատվություն պետք է ներառվի բյուջեյում,այդ իսկ պատճառով երկխոսությունը կառավարության և ՔՀԿ-ների միջև չափազանց կարևոր է, որպեսզի վերջիններս կարողանան ավելի լիարժեք հասկանալ, թե ինչ տեղեկատվություն կարող են գտնել բյուջեյում: :

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Այնուամենայնիվ, երկխոսությունը նաև կարևոր է կառավարության համար, երբ այն փոխանցում է իր տեղեկատվությունը, լսել, թե ինչ կարծիք ունեն քաղաքացիները և ինչ տեղեկատվության կարիք ունեն ներառված քաղաքացու բյուջեյում: Եթե կառավարությունը չունենա երկխոսություն և քաղաքացիներին չտրամադրի այդ տեղեկատվությունը, քաղաքացու բյուջեն, կլինի անիմաստ մի փաստաթուղթ,որը կիրառելի չէ քաղաքացիների կողմից

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հեղինակ՝ Տիգրան Դանիելյան

Համակարգչային աջակցությունը՝ Ալեքսանդր Սարգսյանի

Կազմակերպություն՝

<<Իրավաբանների Հայկական Ասոցիացիա>> ՀԿ